

«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Նյութերի գեղարվեստական մշակման
թեմայի դասավանդումը իմ փորձից

Առարկա՝ Տեխնոլոգիա

Ուսուցիչ՝ Արմինե Եղիազարյան

Դպրոց՝ Երևանի Գ. Ստեփանյանի անվան N⁰ 135 հիմնական դպրոց

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան



Բովանդակություն

Ներածություն.....	3-4
«Նյութերի գեղարվեստական մշակում» բաժնի դերն ու նշանակությունը.....	4-5
Արհեստների ծագումը և զարգացումը.....	6-8
Աշխատանքի պլանավորում.....	9
Ներկանյութեր	10-12
Դեկորատիվ-կիրառական արվեստ	13
Օգտակար ինքնաշեն պարագաների պատրաստում.....	14-16
Նյութերի միասնություն, նյութի բոլոր հնարավորությունների առավելագույն դրսևվորում.....	16
Պատմական ակնարկ կարպետագործության մասին.....	18-19
Եզրակացություն.....	20
Գրականություն.....	21

Ներածություն

Տեխնոլոգիան ճանաչողական գիտություն է, որը ուղղված է մարդու գործնետության բարեփոխման, գիտելիքների համակարգման, գործունեության օպտիմալացման, արդյունքների զարգացման: Տեխնոլոգիա առարկայի հիմնական նպատակն է աշակերտին նախապատրաստել ինքնուրույն կյանքին, կրթել՝ ստեղծագործող, նախաձեռնող և ակտիվ քաղաքացի: Առարկայի շրջանակներում սովորողները զինվում են անհրաժեշտ տեխնիկա-տեխնոլոգիական գիտելիքներով և ունակություններով՝ ապահովելով անձնային և ազգային լավագույն ավանդույթների պահպանման և զարգացման գործը: Տեխնոլոգիայի տարրերի ուսումնասիրությունը ուղղորդված է տարբեր նյութերից շինվածքների պատրաստման ընդհանուր օրնաչափությունների բացահայտմանը: Ցանկացած տեխնոլոգիական գործընթաց իր մեջ ներառում է հետևյալ փուլերը՝ նախապատրաստվածքի ստացումը, դետալների ստացման նպատակով դրանց մշակումը, ձևավորումը, դետալների հավաքումը, շինվածքի վերջնամշակումը: Առաջին փուլում սովորողներն ընտրում են նյութերը և իրականացնում մշակման գործողություններ՝ չափանշում, ծռում, կտրում և այլն: Հավաքման փուլը նախատեսում է շինվածքի առանձին դետալների միացումը տարբեր եղանակներով՝ սոսնձելով, կարելով, մետաղալարով և այլն: Շինվածքը վերջնամշակում են ապլիկացիայով, գունազարդմամբ, ասեղնագործությամբ և այլն: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում տեխնոլոգիայի վերլուծության հմտության ձևավորմանը և շինվածքի պատրաստման ժամանակ տեխնոլոգիական օպերացիաների կատարմանը: Աշխատանքի խմբային ձևերի կազմակերպման դեպքում ծրագիրը նախատեսում է երեխաների ներգրավումը պարզագույն արտադրական հարաբերությունների մեջ, որն ապահովում է իրական տնտեսական գործունեություն: Ուսումնական գործընթացի ժամանակ դպրոցականները ծանոթանում են տարբեր մասնագիտությունների հետ: Ծրագիրը թույլ է տալիս իրականացնել նախապատրաստական մասնագիտական կողմնորոշման աշխատանք, որի նպատակն է դպրոցականների մոտ աշխատանքի և մասնագիտական գործունեության ոլորտի նկատմամբ հետաքրքրության ձևավորումը: «Տեխնոլոգիան» ինտեգրված և բազմաբնույթ առարկա է, որի մեջ ընդգրկված է նաև «Նյութերի գեղարվեստական մշակում» բաժինը: Նյութերի գեղարվեստական մշակում բաժնի դասերի ժամանակ հիմնական ուշադրությունը դարձնում են շինվածքի արտաքին տեսքի վրա՝ անտեսելով գործառույթային մյուս հատկանիշները: Ամեն մի իր, առարկա իր մեջ համատեղում է երկու կարևոր կողմեր՝ մեկը օգտակարության գործառույթն է, իսկ մյուսը պատասխանատու է նրա արտահայտիչ և գեղեցիկ լինելու համար: Ի դեպ, գեղեցկությունն էլ կարող է տարբեր լինել, այն, ինչ գեղեցիկ է մի պարագայում, կարող է անընդունելի լինել (հետևաբար՝ տգեղ) մեկ այլ պարագայում: Հիշենք, որ բոլոր անհրաժեշտ գիտելիքները, կարողություններն ու հմտությունները սովորողները ձեռք են բերում ստեղծագործական գործունեության ընթացքում: Ուստի կարելի է երեխային խրախուսել նյութի հետ ինքնուրույն փորձեր կատարելու, որպեսզի նա հասկանա, թե տվյալ գործողությունն ինչպես կարելի է ավելի հեշտ կատարել: Միշտ պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ «Տեխնոլոգիայի դասընթացի հիմնական



Նպատակը դիզայներական իմացությունների զարգացումը չէ. նույնիսկ կարելի է չօգտագործել «դիզայն կամ դիզայներ» եզրույթները, քանի որ այդ դասերի իմաստն անշուշտ, դրա մեջ չէ: Շատ ավելի կարևոր է հենց առաջին դասարանից երեխաների մեջ ճիշտ պատկերացում ձևավորել շրջապատող առարկաների իմաստի ու գեղեցկության վերաբերյալ, և դրա համար հարկավոր են որոշ հատուկ գիտելիքներ: Իսկ այդ գիտելիքները հարկավոր են ոչ թե եզրույթներն ու հասկացությունները անգիր անելու, հիշելու ձևով, այլ գեղարվեստական նյութերի մշակման եղությունը հասկանալով:



«Նյութերի գեղարվեստական մշակում» բաժնի դերն ու նշանակությունը

Այս բաժնի դասավանդումը նպաստում է սովորողի ինքնաճանաչմանը և ինքնարտահայտմանը, նրա մտափորձի ընդլայնմանը, երևակայության, քննական, վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը, վարպետության, ստեղծարարության, գեղագիտական չափանիշների, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը, և կյանքի, շրջապատող աշխարհի, աշխատանքի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսևորմանը: Այժմ կներկայացնեմ, թե որոնք են «Նյութերի գեղարվեստական մշակում» բաժնի նպատակներն ու խնդիրները» Սովորողներին ծանոթացնել նյութերի ձևափոխման ժամանակակից և առաջընթաց տեխնոլոգիաներին: Սովորեցնել աշխատել նյութի հետ: » Նպաստել սովորողների ստեղծագործական և գեղագիտական զարգացմանը՝ զարգացնել երևակայությունը, քննական, ստեղծագործական, պատկերավոր մտածողությունը, դիտողականությունը, ուշադրությունը, նպատակասլացությունը, աշխատասիրությունը,



ոյուրագագուցությունը, հանդուրժողականությունը: » Սովորողների մոտ ձևավորել գեղեցիկը տեսնելու, զգալու, գնահատելու, պահպանելու և արարելու ցանկություն և կարողություն: Սովորողների մոտ աշխատանքային կուլտուրայի ձևավորումը - աշխատանքային գործընթացի պլանավորում և կազմակերպում, գործիքների և մեխանիզմների ընտրություն, աշխատատեղի կազմակերպում, աշխատանքի անվտանգության ապահովում, տեխնոլոգիական և աշխատանքային կարգապահություն, արտադրանքի որակի վերահսկում: » Սովորողների մոտ գրաֆիկական ունակությունների և կուլտուրայի ձևավորումը: » Սովորողների մոտ դիզայնի կուլտուրայի ձևավորումը - գիտելիքներ, հմտություններ և պատրաստակամություն՝ օգտագործելու էրգոնոմիկայի, գեղագիտության, դիզայնի և Նյութերի գեղարվեստական մշակման մեթոդներն արտադրանքի մրցունակության ապահովման համար: » Սովորողների մոտ զարգացնել տեղեկատվական կուլտուրա - տարբեր աղբյուրներից ստացած գիտելիքների, հմտությունների պահպանման և օգտագործման ունակություններ: » Սովորողների մոտ ձևավորել հետաքրքրություն արվեստի ստեղծագործությունների հանդեպ: » Սովորողների մոտ մասնագիտական կողմնորոշման ունակությունների ձևավորումը: Գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, արժեքներ և վերաբերմունք, որոնք համապատասխան ժամանակակից մեթոդաբանական և դաստիարակչական մոտեցումների դեպքում ձեռք կբերի աշակերտը «Նյութերի գեղարվեստական մշակում» բաժնի ուսումնառումից՝ Կունենա գիտելիքներ արհեստների և արվեստների ծագման և զարգացման մասին:



Արհեստների ծագումը ۶ զարգացումը

Արհեստն աշխատանքի պարզ գործիքների կիրառումով մանր ապրանքային արտադրությունն է, որ գերիշխել է մինչ խոշոր մեքենայական արտադրությունը: Վաղ անցյալում տարածված էին տնային արհեստները, իսկ զարգացած ավատատիրության ժամանակ՝ շուկայական արհեստները, որոնք գոյատևել են նաև կապիտալիստական խոշոր արդյունաբերության պայմաններում և հասել մեր օրերը: Շուկայական արհեստներով զբաղվող հմուտ արհեստավորները ստեղծել են բարձրորակ, հաճախ նաև բարձրարժեք գեղարվեստական արտադրանք: Առավել հին են մորթու, կաշվի արտադրանքի, կավագործական իրերի, փայտի վերամշակման արհեստները: Հայաստանում մ. թ. ա. VI–IV հազարամյակներից սկզբնավորված արհեստներից են կավագործությունը, քարգործությունը, փայտամշակությունը: Պղնձի, կապարի, անագի, երկաթի և ազնիվ մետաղների հանույթի ու մշակման, հալման և ծուլմանտեխնիկայի կատարելագործմանը զուգահեռ զարգացել են մետաղագործական արհեստները՝ պղնձագործությունը, բրոնզագործությունը, դարբնությունը, զինագործությունը, ոսկերչությունը, պատրաստվել են գյուղատնտեսական գործիքներ (բահ, քլունգ, գութանի ու արորի խոփեր և այլն), կենցաղային իրեր (կաթսա, ճրագ, մոմակալ և այլն), զարդեր (մատանի, ականջօղեր, գոտի, ապարանջան և այլն) (նկ.1):





Մետաղագործության բազմաթիվ նմուշներ պահպանվել են մինչև մեր օրերը: Հնագիտական պեղումների ժամանակ Հայաստանում հայտնաբերվել են մեծ քանակությամբ ոսկե, արծաթե, բրոնզե առարկաներ: Քարի տարատեսակներով հարուստ Հայաստանում հնագույն ժամանակներից առավելապես զարգացած էին քարագործությունը, տները, ամրոցները, իջևանատները, եկեղեցիները, կամուրջները հիմնականում կառուցվել են քարից: Միջնադարում կատարելության են հասել նաև կրագործությունը, գաջագործությունը: Հայ շինարարները կրից և գիպսից պատրաստել են հատուկ զարդեր շենքերի ներսը նախշազարդելու համար: Անի և Դվին քաղաքների պեղումներով հայտնաբերվել են դրանց բազմաթիվ հետքեր: Համընթաց սկիզբ են առել նաև կավագործությունը (բրուտագործություն) և ապակեգործությունը, հախճապակու արտադրությունը, որը IX–XI դարերում զարգացման բարձր մակարդակի է հասել Անիում ու Դվինում, շարունակվել Կոստինայում (Թուրքիա): Կավագործ արհեստավորները զարգացրել են նաև շինարարական խեցեղենի՝ աղյուսի, կղմինդրի, փողրակների արտադրությունը: Դարերի խորքից են գալիս նաև աստղձագործությունը, երկրագործական գործիքների, կահույքի արտադրությունը, նավաշինությունը, փայտի գեղարվեստական փորագրությունը և այլն:



Հայաստանը հայտնի էր նաև իր գործվածքներով (բեհեզ, ծիրանի, կերպաս, թավիշ, դիպակ) ու կաշվեղենով, դրանք արտադրող արհեստներով՝ գգրարություն, մանածագործություն, մետաքսագործություն, բամբակագործություն, կտավագործություն, գորգագործություն, կարպետագործություն, թաղիքագործություն, կոշկակարություն, որոնց սերտորեն կապված էր ներկարարությունը:



Պատմական Հայաստանի քաղաքներից շատերը որևէ արհեստի նշանավոր կենտրոններ էին: Արհեստավորներին ղեկավարել են տվյալ արհեստի շահերը պաշտպանող համքարությունները: Բարձրորակ կերտվածքներ պատրաստող արհեստները շարունակ



կատարելագործվում և առավելագույնս մոտենում են արվեստներին: Արվեստը հասարակության գիտակցության ձևերից մեկն է: Նրա հիմքը կազմվում է իրականության գեղարվեստական-պատկերավոր արտացոլումը: Արվեստը օգնում է ճանաչել աշխարհը, ձևավորում մարդկանց հոգևոր նկարագիրը, նրանց զգացմունքներն ու մտքերը, նրանց աշխարհայացքը, դաստիարակում է մարդուն, ընդլայնում մտահորիզոնը, արթնացնում ստեղծագործական ընդունակություններ: Արվեստի պատմական զարգացման ընթացքում սկզբնավորվել են նրա տարբեր տեսակները՝ գեղանկարչություն, քանդակագործություն, գծանկարչություն (գրաֆիկա), ճարտարապետություն, զարդարարական (դեկորատիվ) կիրառական արվեստ և այլն: Այս բոլոր տեսակները խոսում են կյանքի էության գեղեցիկի մասին, բայց յուրաքանչյուրը արտահայտելով յուրովի: Արվեստի ամեն տեսակ ապրում է վերելքի և վայրէջքի ժամանակաշրջաններ. դրանց զարգացումն անհամաչափ է տեղի ունենում: Արվեստի տարբեր ձևերի միջև սահմանները հարաբերական են, նրանք երբեմն միահյուսվում կամ զուգակցվում են իրար: Կիմանա արտադրանքի գեղարվեստական ձևավորման տեսակները. կիրառական դեկորատիվ ձևավորում, դեկորատիվ ներկում և երանգավորում, նկարների արտատպում ներկերով, այրում և այլն: Կտիրապետի տարբեր նյութերի գեղարվեստական մշակման տեխնոլոգիաներին, արտադրանքի գեղարվեստական մշակման համար անհրաժեշտ հարմարանքներին ու գործիքներին: Գաղափար կունենա արտադրանքի ֆունկցիոնալ և գեղագիտական արժեքի մասին: Կկարողանա պլանավորել աշխատանքի հաջորդականությունը:








Աշխատանքի պլանավորում

Ինչպե՞ս պլանավորել որևէ իր կարելու գործընթացը: Ինչպես և ցանկացած գործընթաց, հագուստ կարելը նույնպես ենթադրում է գործողությունների պլանավորում: Դրանով է պայմանավորված վերջնարդյունքի որակը: Նախապես պլանավորված աշխատանքն իրենից ներկայացնում է աշխատանքի հստակ քայլաշար, որի ընթացքից կատարողը ստանում է գերազույն հաճույք: Առաջանում է նոր գաղափարներ իրականացնելու, ստեղծագործելու մեծ ցանկություն: Ստորև ներկայացնում ենք աշխատանքի պլանավորման քայլաշարը:

1. Ընտրել մոդելը և նյութերը
2. Վերցնել չափսերը
3. Կառուցել գծագիրը
4. Պատրաստել ձևանը-լեկալը
5. Գործվածքը նախապատրաստել ձևելուն
6. Ձևել
7. Ձևած դետալները նախապատրաստել կարելուն
8. Կատարել կարելու քայլաշարը



9. Արդուկել

1	Ընտրել մոդելը և նյութերը	
2	Վերցնել չափսերը	
3	Կատուցել գծագիրը	
4	Պատրաստել ձևանը (լեկալը)	
5	Գործվածքը նախապատրաստել ձևելուն	
6	Ձևել	
7	Ձևած դետալները նախապատրաստել կարելուն	
8	Կատարել կարելու քայլաշարը	
9	Արդուկել պատրաստի իրը	

Կկարողանա նախապատրաստել շինվածքը աշխատանքի: Կիմանա ներկանյութերի տեսակները: Կկարողանա օգտագործել գործիքները ներկանյութով աշխատելիս և կատարել դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշի ձևավորում ներկանյութով:

Ներկանյութեր

Ներկերը գունավոր նյութեր են, որոնք օգտագործվում են առարկաներին գեղեցիկ տեսք տալու և մակերևույթը քայքայումից պաշտպանելու նպատակով: Ներկերը կազմված են թաղանթ առաջացնող նյութերից և գունանյութերից: Հաճախ պարունակում են նաև լուծիչներ: Որպես թաղանթ առաջացնող նյութեր՝ օգտագործվում են ձեթերը, օլիֆները, լաթերը, պոլիմերների ջրային էմուլսիաները, բուսական կամ կենդանական սուսինձները, հեղուկ ապակին և այլն: Գունանյութերով են պայմանավորված ներկերի գույնը, ծածկունակությունը, անթափանցելիությունը, հակակոռոզիային հատկությունը և այլն: Մածուկային ներկերը պատրաստում են գունանյութը սոսնձանյութում տրորելու միջոցով: Օգտագործելուց առաջ մածուկային ներկերը նոսրացնում են օլիֆով կամ այլ լուծիչով: Արտադրվում են նաև օգտագործման համար պատրաստ հեղուկ ներկեր: Փոշեներկերը նստեցնում են առարկայի մակերևույթին, ապա հալում տաքացնելով: Տարբերում են շինարարական, տպագրական և գեղանկարչական ներկեր: Ներկանյութերը քիմիական նյութեր են, որոնք օգտագործվում են գործվածքին, կաշվին, մորթուն, թղթին, պլաստմասսաներին և այլ առարկաների ու իրերի՝ լույսի, շփման, ջրի, քրտիկների, օճառի և այլ վնասամիջոցների ազդեցության նկատմամբ կայուն գույն տալու

Նպատակով: Նախկինում օգտագործվում էին բնական ծագում ունեցող ներկանյութեր, որոնք XIX դարի կեսերից գրեթե լրիվ կորցրին իրենց կիրառական նշանակությունն ու փոխարինվեցին սինթետիկ ներկանյութերով: Ներկանյութերի գույնը՝ տեսանելի լույսն ընտրողաբար կլանելու ունակությունը, պայմանավորված է նրանց քիմիական կառուցվածքով և գունակիր խմբերի առկայությամբ:

Ներկանյութերի ստացման պատմությունից

Անցյալում առարկաները ներկելու համար օգտագործում էին գունավոր կավեր, մետաղների օքսիդներ, մուր, բուսական ու կենդանական նյութեր: Ինդիգոակիր բույսերի տերևներից ստանում էին ինդիգո, տորոնի արմատներից՝ ալիզարին, միջերկրածովային փափկամորթներից՝ «անտիկ» ծիրանագույն, մանգոյի տերևներով սնվող կենդանիների մեզից՝ «հնդկական դեղին»: Հայկական ձեռագրերում նկարագրված են Հայաստանում օգտագործվող և զգալի քանակներով արտահանվող լաջվարդի (Հայաստանում այսպես էին անվանում ինդիգոն), սև թանաքի, որդան կարմիրի և այլ ներկանյութերի ստացման եղանակները:

Որդան կարմիր կամ **Արարատյան որդան կարմիր** (*Porphyrophora hamelii*), *Margarodidae* ընտանիքին պատկանող միջատ, որից հնում հայերը պատրաստում էին նույնանուն ներկը: Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում:



Չնում Արարատյան դաշտում աճում էին այնպիսի խոտեր, որոնք ծնունդ էին տալիս մի տեսակ միջատների, որդերի:

Հայերը հավաքում էին այդ որդերը, եփում և ստանում մուգ ու պայծառ կարմիր գույնի ներկ, որ կոչվում էր որդան կարմիր կամ Հայկական ներկ:

Շատ երկար դարեր այդ ներկը եղել է Հայաստանի հպարտությունը: Այն ունեցել է համաշխարհային համբավ: Հաճախ հեռավոր երկրներում «Հայոց աշխարհի»-ի փոխարեն օգտագործում էին Որդան կարմիրի երկիր արտահայտությունը: Որդան կարմիրի արտադրությունը եղել է Հայ թագավորների մենաշնորհը: Քաղաքամայր Արտաշատում կային հատուկ ներկատներ, որոնց կոչում էին արքայական: Հին Հայաստանից արտահանվող ապրանքների բոլոր ցուցակները սկսվում էին որդան կարմիրով:

Որդան կարմիրը Հին Հայերի մոտ եղել է որպես ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ խորհրդանիշ: Պատմական Հայաստանի Բոլոր գավառների և իշխանական տների բազմատեսակ զինադրոշների վրա իշխող է եղել այս գույնը: Տիգրան II-ի Թագավորության ժամանակաշրջանում Հայկական Հպատակություն ընդունած վասալ արքաները իրենց

դրոշների վերին երիզը ներկում էին որդան կարմրով, որով իրենց հավատարմությունն էին հավաստում Հայոց Արքայից-Արքային:

Արաբները Արտաշատ քաղաքը կոչել են որդան կարմիրի քաղաք:

15-րդ դարում Հայ մեծ բժիշկ Ամիրդովլաթ Ամասիացին իր աշխատություններից մեկի մեջ հետաքրքիր տեղեկություն է հաղորդում այս ներկի առանձնահատկությունների մասին:

19-րդ դարում Այդր լճի շրջակայքում և Արաքսի մերձափնյա Շորլու, Սարվանլար, Խոր Վիրապ վայրերում դեռևս աճում էին որդան կարմիրի սեզերը:

Շուրջ երկու հազար տարի Հայկական որդան կարմիրը եղել է աշխարհի ամենաթանկարժեք ու բարձրորակ ներկը: Նրանով ներկում էին ոչ միայն խաների հանդերձները, այլև նկարագարդում էին թանկարժեք մագաղաթները: Որդան կարմիրը օգտագործել է նաև որպես թանաք: Հին և միջին դարերում Արևելքի և Եվրոպայի թագավորներն ու կաթողիկոսները ստորագրում էին միայն որդան կարմիր թանաքով: Աշխարհում տարածված կարմիր թանաքով ստորագրությունը (բոլոր տեսակի փաստաթղթերի վրա) սկիզբ է առել Հայկական որդան կարմիր օգտագործումից:

XIX դարում մանածագործության բուռն զարգացումը մեծացրեց ներկանյութերի պահանջարկը: 1855 թ-ին լեհ քիմիկոս Յա. Նաթանսոնը Վարշավայի համալսարանում ստացավ առաջին սինթետիկ ներկանյութը՝ ֆուբսինը (գույնով հիշեցնում է ֆուբսիայի ծաղիկը): 1856 թ-ին անգլիացի քիմիկոս և արդյունաբերող Վ. Հ. Պերկինս ստացավ մետաքսը կարմրամանուշակագույն ներկող մոլեխինը և կազմակերպեց դրա արտադրությունը: 1869-ին Կ. Գրեբեն և Կ. Լիբերմանը սինթեզեցին ալիզարինը, 1870 թ-ին Ա. Բայերը՝ ինդիգոն: Սինթետիկ ներկանյութերի արտադրությունը կենտրոնացավ Գերմանիայում: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ այն տարածվեց նաև Անգլիայում, Շվեյցարիայում, ԱՄՆ-ում և այլուր: Ներկայումս շատ ավելի է ընդլայնվել սինթետիկ ներկանյութերի արտադրությունը, և ավելի է մեծացել դրանց կիրառությունը: Սինթետիկ ներկանյութեր արտադրվում են նաև Երևանում: Ներկանյութեր տերմինը 1908 թ-ին առաջարկել է ռուս քիմիկոս Ա. Պորայ-Կոշիցը:

«Անտիկ» ծիրանագույնով ներկում էին Հին Հռոմի կայսրերի հագուստները: Երկար ժամանակ ծիրանագույնով ներկված հագուստները մատչելի էին միայն տիտղոսավոր անձանց, և դա է պատճառը, որ մինչ օրս անգլերենում պահպանվել է «Ծնված լինել ծիրանագույնի համար» արտահայտությունը, որը նշանակում է լինել հարուստ և բարձր դիրք զբաղեցնել: Հայոց մեջ տարածված էր հայկական ծիրանին՝ որդան կարմիր ներկը, որով ներկում էին արքայական և իշխանական զգեստները: Այն օգտագործվում էր և՛ մանրանկարչության մեջ, և՛ որպես արքայական ու կաթողիկոսական կնիքի ներկ:

Օգտակար ինքնաշեն պարագաների պատրաստում

Եթե գլխարկ-ասեղամանն իր տեղը կգտնի ձեր աշխատասեղանին, ապա ժամանակն է ստեղծել մի նոր տեսակի ասեղաման, որն իր տեղը կգտնի ձեր պայուսակում: Հաճախ հայտնվում ենք այնպիսի հանգամանքներում, երբ անսպասելի իրավիճակներում մեզ պետք է գալիս թել ու ասեղ, գնդասեղ և այլն: Նման իրավիճակներում մեզ փրկում է պայուսակում եղած ասեղամանը: Եթե այն պատրաստված է սեփական ձեռքերով, ապա կրկնակի հաճելի է դառնում դրա օգտագործումը:



Գլխարկ-ասեղաման



Ձևանը տեղադրել գործվածքի վրա




Կտրել երկու շրջան, կարել բլանդակարով



1-ին շրջանի վրա դրվում է սովորաբար ձևանը և ձգվում բլանդակարի



2-րդ շրջանը լցնվում է րայց վերջնական չեն ամրացնում



Լցնած շրջանը դնել առաջին շրջանի վրա և ամրացնել թելերը



Ամրացրած թելերը հավաքել կենտրոնում



Միացնել գլխարկի հատակը վերևի հետ գաղտնակարով



Ձևավորել գլխարկը



Միացնել գլխարկի հատակը վերևի հետ գաղտնակարով

Պայուսակում հարմար է պահել նոթատետր-ասեղամանը: Ուսումնասիրեք տարբերակները և որոշեք, թե ինչ պատրաստել: Հիշե՛ք, որ ամենայուրօրինակ տարբերակը ձեր ստեղծագործությունն է:

Կիմանա ասեղնագործության մասին, ասեղնագործության համար անհրաժեշտ գործիքները և հարմարանքները, զարդանախշերը, զարդակարերի տեսակները, ասեղնագործության աշխատանքի քայլաշարը: Կկարողանա կատարել հագուստի, ինտերիերի, կենցաղային առարկաների գեղարվեստական ձևավորում:



Այսպես, դասից դաս սովորողներն անհրաժեշտ գիտելիքներ են ձեռք բերում, սովորում են ճիշտ գնահատել շրջապատող առարկայական աշխարհը: Օրինակ՝ կրտսեր դպրոցականները բազմաթիվ էջանշաններ են պատրաստում՝ թղթից, ստվարաթղթից, բնական և արհեստական նյութերից: Կոնկրետ օրինակով կարելի է երեխաների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, թե ինչով է նպատակահարմար էջանշանը, ցանկալի չէ դրա փոխարեն օգտագործել մատիտ, քանոն կամ որևէ այլ առարկա, դրանք կարող են փչացնել գիրքը: Իսկ թղթի կտորը, այն գեղեցիկ չէ և այնքան էլ ամուր չէ: Դասի սկզբում միշտ պետք է այսպիսի վերլուծություն կատարել՝ կրտսեր դպրոցականների ուշադրությունը հրավիրելով հետևյալ գլխավոր սկզբունքի վրա՝ մարդուն շրջապատող իրերը պետք է լինեն գեղեցիկ և հարմար: Այս դեպքում առարկայի նկատմամբ ճիշտ վերաբերմունք կձևավորենք, կսովորեցնենք ճիշտ գնահատել առարկայի օգտակարությունն ու հարմարավետությունը, ինչից էլ ձևավորվում է գեղեցկությունն ու արտահայտչականությունը: Սովորողները համոզվում են, որ այդքան էլ հեշտ չէ միանշանակ գնահատական տալ այդ չափանիշներին, այն, ինչ հարմար ու գեղեցիկ է մի դեպքում, բացարձակապես պետք չի գալիս մեկ ուրիշ միջավայրում: Շատ օգտակար ու ցանկալի է իրար նման, բայց տարբեր գործառույթներ ունեցող առարկաների համեմատությունը: Այդ նպատակով կրտսեր դպրոցում «Տեխնոլոգիայի»

դասերին աշակերտները պատրաստում են երկու տարբեր ասեղամաններ՝ ճանապարհորդական և դեկորատիվ: Համեմատելով այդ ասեղամանները՝ մենք ցույց ենք տալիս, թե ինչպես են կապված շինվածքի ձևը, կառուցվածքն ու գործառույթները: Օրինակ՝ ճանապարհորդական ասեղատուփը փոքր է, հարթ, որպեսզի հարմար լինի տեղափոխելու և ունենա ղեկը դրամապանակի մեջ: Այն ամուր կազմ ունի, որպեսզի ասեղները դուրս չգան: Ձևավորումը զուսպ է, լակոնիկ: Ամեն ինչ նախատեսված է ճանապարհային պայմաններում դրա հարմարավետության համար: Դեկորատիվ ասեղամանն, ընդհակառակը, շատ անհարմար է ճանապարհի համար, քանի որ ասեղները կարող են թափվել: Այն զարդարում է ինտերիերը:

Նյութերի միասնություն, նյութի բոլոր հնարավորությունների առավելագույն դրսևորում

Ինչպես նշում է կիրառական արվեստի մասնագետ Սալտիկովը, «լավ ճաշակը սիրում է իսկականը»: Միայն այն դեպքում է հնարավոր մի նյութը փոխարինել մյուսով, երբ դրանք նման են արտաքին հատկանիշներով (փայլուն կամ փայլատ, հարթ կամ խորդուբորդ, պինդ կամ փափուկ): Օրինակ՝ հնարավոր է ոսկին նմանակեղծել (իմիտացիա) արծաթյա ապրանքների մեջ, և դրանք կհամապատասխանեն գեղարվեստական բոլոր չափանիշներին, սակայն ճենապակե իրերը չի կարելի փոխարինել փայտով, դրանք, միևնույն է, հաջողություն չեն ունենում: Յուրաքանչյուր նյութ ունի իր սեփական արժանիքները, առավելությունները, որոնք պետք է հայտնաբերել, բացահայտել, օգտագործել և հաշվի առնել շինվածքներ պատրաստելիս: Վերցնենք մի այնպիսի տարածված ու մատչելի նյութ, ինչպիսին թուղթն է: Գիտենք, որ թուղթը կարելի է կտրել մկրատով, դանակով, պատռել ձեռքով, կարել, ծակել հերյունով, սոսնձել, թրջել և այլն: Մշակման ժամանակ, սակայն, տարբեր տեսակի թղթեր իրենց տարբեր կերպ են «պահում», օրինակ, խոնավ թուղթն ավելի հեշտ է պատռվում: Նյութերի հատկությունները բազմազան են, իսկ մշակման համապատասխան եղանակների ընտրությունը կախված է առաջադրված խնդրից (օրինակ, եթե պետք է թուղթն ուղիղ գծով կտրել առանց քանոնի, պետք է այն ծալել, հարթեցնել, նոր միայն կտրել, ավելին՝ կարելի է նաև ծալման գիծը թրջել:

Կիմանա փայտանյութի գեղարվեստական փորագրության, աշխատատեղի ճիշտ կազմակերպման, փորագրության գործիքների, փայտի գեղարվեստական փորագրության եղանակները (երկրաչափական փորագրություն, եզրագծային և հարթ ռելիեֆային փորագրություն, ցանցկեն փորագրություն և այլն), զարդաքանդակի գեղերեսման նյութերը և գեղերեսումը, զարդաքանդակի վերջնամշակման տեխնոլոգիաները: Տեղյակ կլինի մետաղների գեղարվեստական մշակման ձևերին (ծուլում, դրվագում, դրոշմագարդում, փորագրություն, դարբնագործություն, հյուսագարդում), դրվագման նյութերին և գործիքներին, դրվագման տեխնոլոգիաներին:

Կիմանա կարպետագործության մասին, նրա տեսակների, կարպետագործության մեջ օգտագործվող նյութերի, գործիքների և սարքավորումների մասին, կարպետ գործելու քայլաշարը:



Պատմական ակնարկ կարպետագործության մասին

Հնագույն մշակույթ ունեցող ժողովուրդների մեջ ուրույն տեղ է զբաղեցնում հայ ժողովուրդը իր բազմաժանր արհեստով ու արվեստով: Հայկական մշակութի մեջ առանձնակի տեղ է զբաղեցնում գորգագործությունը և կարպետագործությունը: Գորգերը և կարպետները հայ ժողովրդի ինքնատիպ մշակույթի լավագույն դրսևորումներից են, որոնք համարժեք են քանդակագործությանը և մանրանկարչությանը: Ձեռագործ աշխատանքները այսօր էլ կատարվում են մեր նախնիների մտահղացմամբ ստեղծածի հիմքով: Կարպետը բրոյա կամ բամբակյա հաստ գործվածք է, որն իբրև գորգ փռում են հատակին, թախտին և այլն, ինչպես նաև օգտագործում որպես վրանի ծածկոց: Պատմական Հայաստանում գորգերն ու կարպետները համարվել են առաջին անհրաժեշտության իրեր, դրանք մեծ պահանջարկ են ունեցել կենցաղում՝ պատրաստել են գոգնոցներ, գլխարկներ, խուրջիներ և այլն: Կարպետագործության համար հում նյութ է հանդիսացել ոչխարի, ուղտի բուրդը, այծի փափուկ մազը (դֆտիկ), բամբակը, մետաքսը: Հայկական գորգագործության նյութը, հյուսվածքաթելը, հենքաթելը՝ բուրդ, մետաքս, վուշ, կանեփ, բամբակ, ներկերը՝ բուսական, կենդանական, հանքային, գործիքները և գործելու տեխնիկան ու զարդամոտիվները հնագույն ծագում ունեն:



Կգարգանա գեղագիտական ճաշակը

Գեղագիտական ճաշակ, գեղեցիկի դիրքերից արվեստի ստեղծագործությունն ու իրականությունն ընկալելու և սոցիալ-հոգեբանական գնահատական տալու մարդու հոգևոր ընդունակությունը: Որպես գեղագիտական կատեգորիա ճաշակը, ըստ Էուբյան, կիրառվում է 17-րդ դարից: Սկսած Ն. Բոալոյից ճաշակի հիմնական հատկանիշներ են համարվել ճշմարտամանությունը, բանական լինելը, հստակությունը. Յ. Յոմը և Ա. Շաֆտսբերին ճաշակին հաղորդել են նաև բարոյական իմաստ: Ի. Կանտը «ճաշակի անտիևնոմիաներում» ճաշակ ներկայացրել է որպես զգայության և բանախոհության երկընտրանք, որպես հակասություն անհատական ազատ դատողության և ճաշակի համընդհանրության միջև: Սակայն Կանտը չկարողացավ լուծել այս անտիևնոմիաները: Հեգելը ճաշակը քննարկել է հիմնականում կապված արվեստի հետ: Սակայն գիտակցելով ճաշակի լայն բովանդակությունը՝ պնդել է, որ այն «մշակույթի ազդեցությամբ նրբացված գեղեցիկի զգացումն է: Մարքսիստական գեղագիտությունն ընդգծում է ճաշակի հասարակական բնույթը և կախվածությունը նրա կրողի սոցիալական դրությունից, գործուն բնույթը և առարկայական պայմանավորվածությունը: Մարքսիստական գեղագիտությունը ճաշակը դիտում է որպես կյանքի բոլոր բնագավառներում դրսևորվող պատմահասարակական մշակույթի արտահայտություն: ճաշակի առաջացման մեջ ելակետային գործոն է ճանաչվում արվեստը: Բնության, մարդու և մարդկային պատմության գեղագիտական կողմի նկատմամբ ճաշակի ձևավորումը ածանցյալ է և պատմականորեն իրականացվել է արվեստի միջոցով: Ընդհանրապես ճաշակի զարգացման պատմությունը վկայում է նրա ոլորտների ընդլայնումը: Արվեստի մեջ գեղեցիկի ընկալումով ավելի խոր և նուրբ է ըմբռնվում նաև բնության, շրջապատի իրերի, մարդու գեղեցկությունը: Առօրյայում օգտագործվում է նաև «գեղարվեստական ճաշակ» հասկացությունը՝ որպես գեղագիտական ճաշակի հոմանիշ: Այս դեպքում գեղարվեստական ճաշակը հասկացվում է որպես գեղագիտական ճաշակ, որը դրսևորվում է գեղարվեստական գործունեության ոլորտում (գեղարվեստական ստեղծագործության գնահատումը, ստեղծումը, ընկալումը): Գեղարվեստական ճաշակի ձևավորման վրա ազդեցություն են ունենում ինչպես անհատի սոցիալական դրությունը, այնպես էլ ժողովրդի ազգային ավանդույթները տեղի գեղարվեստական մշակույթի յուրահատկությունները: Գեղագիտական ճաշակի ձևավորումը գեղագիտական դաստիարակության նպատակներից է: ճաշակ գործածվում է նաև սեր կամ հակում («երաժշտական ճաշակ», «գրական ճաշակ»), ինչպես և ոճ («եվրոպական ճաշակ», «18-րդ դարի ճաշակով») իմաստներով:

Կձևավորվի համապատասխան մասնագիտական բառապաշար:

Կարժևորի աշխատանքը և նրա դերը մարդու կյանքում:

Ձեռք կբերի աշխատասիրություն, ուշադրություն, իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողություններ:

Կիմանա ռեսուրսները արդյունավետ օգտագործելու կարևորությունը:

Կկարողանա բացահայտել և զարգացնել իր հետաքրքրություններն ու նախասիրությունները արհեստի և արվեստի ոլորտում, որը կնպաստի մասնագիտական կողմնորոշմանը:

Կկարողանա (կսովորի) գործնականորեն կիրառել ձեռք բերված գիտելիքները և կարողությունները, պահպանելով տեխնոլոգիական պահանջները և անվտանգության կանոնները:

Եզրակացություն

Որպես ինքնուրույն յուրացման նյութ սովորողի ստեղծագործական և գեղագիտական զարգացումը, մասնավորապես՝ նախագծերի կատարման և նյութերի գեղարվեստական մշակման ընթացքում է ի հայտ գալիս: Տեխնոլոգիայի դասերին հաճախ սովորողները հնարավորություն են ունենում ազատ ստեղծագործելու, որտեղ շատ հստակ երևում է յուրաքանչյուրի հետաքրքրությունները, ճաշակը, մտքի և ձեռքի համապատասխանությունը: Տեխնոլոգիան իր բնույթով անընդհատ ստեղծագործելու, պրպտելու և կատրելագործվելու հնարավորություն ստեղծող բնագավառ է: Հատուկ կարիքով սովորողներին առանձնացնել չեմ ցանկանա, քանի որ նրանք ևս բավականին լավ ինտեգրվում են գործընթացին, շատ հաճախ նրանց մտավոր և ֆիզիկական առանձնահատկությունները ընդհանուր աշխատանքային պրոցեսում չի առանձնանում, նրանք հաճախ ավելի ունակ և գործունակ են դառնում, որը իրենց լրացուցիչ ինքնավստահություն է ներշնչում, որով և բացատրվում է նմանօրինակ սովորողների սերը տեխնոլոգիա առարկայի նկատմամբ: Այս բաժնի ուսումնասիրումը ձևավորում և ընդլայնում է սովորողների պատկերացումները աշխատանքային գործիքների տեսակների, դրանց կառուցվածքի, նշանակության, տարբեր դետալներից մոդելի հավաքման, տեխնիկական օբյեկտների, տարբեր սարքավորումների, մեքենաների նշանակության, դրանց ձևերի և ընդհանուր կառուցվածքի, աշխատանքի սկզբունքի, կիրառության և օգտագործման բնագավառների մասին: Տարբեր դետալների հավաքածուներից մանրակերտի և մոդելների պատրաստման ընթացքում, տարբեր խաղային իրավիճակներում սովորողները ծանոթանում են ժամանակակից տեխնիկայի բազմազանությանը, դրանց պարզագույն գրաֆիկական և կառուցողական տարրերին, որոնց շնորհիվ զարգանում է նրանց վերլուծական, կառուցողական և տեխնիկական մտածողությունը: Աշակերտը դպրոցում ընդհանուր կրթություն է ստանում, և յուրաքանչյուր ուսումնական առարկա այդ ընդհանուր կրթության ամբողջի մեջ իր մի մասն է ապահովում: Մասնակից դառնալով գեղեցիկ և հարմարավետ իրերի պատրաստմանը՝ աշակերտները սկսում են մտածել մարդու, նրա ստեղծած միջավայրի և բնության ներդաշնակության մասին, այն մասին, որ իրերը մարդու մասին տեղեկատվություն են պարունակում, որ ոչ թե մարդն է ստեղծված իրերի համար, այլ իրերն են ստեղծված մարդու համար և ծառայում են նրան: Անկախ այն բանից, թե ինչ մասնագիտություն կընտրի ապագայում աշակերտը, նման դիրքորոշումը նրան ուղղակի անհրաժեշտ է կյանքում: Միջնակարգ դպրոցում դեռահասները տիրապետում են արվեստի տարբեր ճյուղերի լեզվին, որը հնարավորություն է տալիս նրանց ինքնուրույն ըմբռնել արվեստի գործերը, ինչպես նաև ստեղծում է նախադրյալներ ինքնուրույն ստեղծագործելու համար:

Գրականություն

1. Շիշմանյան Ռ., Բնանկարն ու հայ նկարիչները, Ե., 1958:
2. Ազարյան Լ.Ռ., Կիլիկյան մանրանկարչությունը XII-XIII դդ., Ե., 1964:
3. Հայկական մանրանկարչություն, Ե., 1967: Ավետիսյան Ա. Ն., Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը, Ե., 1971:
4. Մարտիկյան Ե., Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք 1-2, Ե., 1971/75:
5. Ղազարյան Մ., Հայ կերպարվեստը XVII - XVIII դարերում, գեղանկարչություն Ե., 1974:
6. Дурново Л. А., Краткая история древнеармянской живописи, Е., 1957;
7. Химическая технология текстильных материалов : [Учеб. для вузов по спец. «Хим.-технология и оборуд. отделоч. пр-ва»] / Г. Е. Кричевский, М. В. Корчагин, А. В. Сенахов ; Под ред. Г. Е. Кричевского, 640 с. ил. 22 см, М. Легпромбытиздат 1985
8. Венкатараман К., Химия синтетических красителей, пер. с англ., т.1-6, Л., 1956/77.
9. Бородкин В. Ф. Химия красителей. М.- Химия 1981 г.
10. Гордон П., Грегори П., Органическая химия красителей, пер. с англ., М., 1987;
11. Степанов Б. И., Введение в химию и технологию органических красителей, 3 изд., М., 1984;
12. ГОСТ 9733.0 - 27.83. Материалы текстильные. Методы испытаний устойчивости окраски.
13. ГОСТ 9733.1 - 91. Материалы текстильные. Метод испытания устойчивости окраски к свету.